

Մ-34

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
Մ.ԱՔԵՂՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ**

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԱՐՄԻՆԵ ԱՇՈՏԻ

XIX ԴԱՐԻ ԴԱՐՄԻՑ ԶՈՒՇԱԳՐԱՅԻՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Ժ.01.07 - «Արտասահմանյան գրականություն»
մասնագիտությամբ բանասիրական գիտությունների
թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ-2015

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանում

Գիտական դեկավար՝ բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր ԳԱՐՆԻԿ ՍԵՐՈՔԻ ԱՍԱՏՐՅԱԼ

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր ԿԱՐԼԵՆ ՈՎՖԱՅԵԼԻ ՄԱՏԻՆՅԱԼ

բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ ԼԻԼԻՈ ՍԵՐՈՒԺԱՆԻ ՍԱՖՐԱՍՏՅԱԼ

Առաջատար կազմակերպություն՝ Հայ-ռուսական (Սլավոնական) համալսարան

Պաշտպանությունը կայանալու է 2015 թ. մարտի 27-ին՝ ժամը 12:30-ին ՀՀ ԳԱԱ Մ.Աբեղյանի անվան գրականության ինստիտուտում գործող ԲՈՅ-ի Հայ և արտասահմանյան գրականության 003 մասնագիտական խորհրդում:

Հասցեն՝ ք. Երևան, Գրիգոր Լուսավորիչ, 15

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ Մ.Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2015թ. փետրվարի 27-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար բանասիրական գիտությունների թեկնածու՝

Ս.Ա.Մարգարյան

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Ատենախոսությունը նվիրված է XIX դարի պարսից արձակի հուշագրային ժանրի ուսումնասիրությանը:

XIX դարը համաշխարհային գրականության մեջ նշանավորվեց վավերագրական ժանրերի աշխուժացումով, ինչը պայմանավորված էր այդ ժամանակի պատմական, հասարակական, քաղաքական, տնտեսական ու գիտատեխնիկական նոր իրողություններով: Արձակական այդ փոփոխությունները նպաստեցին հուշագրության զարգացմանը՝ ինչպես համաշխարհային, այնպես էլ պարսից գրականության մեջ, որտեղ այն աստիճանաբար հաստատվեց ինքնուրույն ժանրի իրավունքներով՝ շարունակելով ժանրի զարգացման պատմական որոշ հանգամանքների հետևանքով ընդհատված ավանդույթը:

Չնայած XIX դարի պարսից գրականությունն ընդհանուր զարգացումներում հետ էր մնում համաշխարհային գրականությունից, սակայն հուշագրային, հատկապես ուղեգրության ենթաժանրի իմաստով նրա առաջընթացը՝ թեև որոշ ուշացումով և պակաս զարգացումներով, տիպաբանորեն համահունչ էր գրական ընդհանուր զործոնթացին և իր տեղն էր գրավում ժամանակի գրականության ամբողջական համապատկերում:

ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻՎԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Թեմայի արդիականությունը պայմանավորված է մի քանի հանգամանքներով: Պարսից հուշագրային ժանրը մենագրական համակողմանի ուսումնասիրության ենթարկված չէ, և ներկա աշխատանքը միտված է լրացնելու այդ բացը՝ տվյալ ժամանակահատվածում ժանրի զարգացման համապատկերը ներկայացնելով: Հայտնի ռուս գրականագետ Մ. Բախտինը գրականության պատմությունը համարում էր ժանրերի պատմություն, այդ իսկ նկատառումով պարսից գրականության հուշագրային ժանրի հանգամանակից ուսումնասիրությունն արդիական է քանի որ օգնում է համակարգել XIX դարի պարսից գրականության հիմնական թեմաներն ու մոտիվները, ուրվագծել տվյալ ժամանակաշրջանի իրանական խոսքարվեստի զարգացման ընդհանուր միտումները: Ատենախոսության արդիականությունը կապված է ուղեգրությունների պակաս ուսումնասիրված լինելու իրողության հետ: առաջին անգամ առանձնահատկությունների տիպաբանական ընդհանրությունների դիտարկման միջոցով փորձ է արվում լուսաբանել հուշագրային տարբեր ենթաժանրերի տեղն ու նշանակությունը պարսից գրականության մեջ:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԱՈՒՐԿԱՆ, ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Թեմայի արդիականության վերը նշված հիմնախնդիրների մեկնակետից են որոշված աշխատանքի հիմնական **նպատակը** և հետևյալ **խնդրառումները**, դիտարկել պարսից ուղեգրությունների և ծանապարհորդական օրագրերի ենթաժանրերի ծագման ու զարգացման հանգամանքներն ու առանձնահատկությունները ցույց տալով դրանցում XIX դարի Պարսկաստանի կյանքում տեղի ունեցած պատմա-մշակութային և հասարակական-քաղաքական տեղաշարժերի նշանակությունը: Ուսումնասիրել ժամանակի պարսից հուշագրային երկերը որպես գրական երևույթ և բացահայտել դրանք կազմավորող ժանրաստեղծ արտահայտչամիջոցները: Հնարավորինս մանրամասն ու համակողմանի վերլուծել առանձին հեղինակների ստեղծագործությունները և այդ հիման վրա ցույց տալ ժանրի զարգացման ընդհանուր ուղիություններն ու առանձնահատկությունները:

Ներկա ուսումնասիրության կարևոր **խնդիրներից** մեկը եղել է ստեղծագործություններում առկա ժանրային որոշակի տիպաբանական ընդհանրությունների բացահայտումը, հուշագրական պատումի հյուսվածքում լեզվաճանաչ տարբեր շերտերի պարզաբանումը: Նշված նպատակային խնդիրներն ատենախոսության մեջ մանրամասնված են հետևյալ հիմնահարցերի լուսաբանումներով:

1) պարսից գրականության մեջ հուշագրային ժանրի սկզբնավորման և զարգացման պատմությունը,

- 2) տվյալ ժանրի ստեղծագործությունների ի հայտ գալու նախադրյալները,
- 3) XIX դարի հուշագրային երկերի բովանդակային ընդգրկումները,
- 4) հեղինակային որոշակի մտայնությամբ ստեղծված սաֆար-նամեների առանձնահատկությունները և դրանց ճանաչողական ու գեղարվեստական համահունչությունը բովանդակությանը,
- 5) հուշագրային ստեղծագործությունների լեզվաոճական առանձնահատկությունները և դրանց նշանակությունը ժամանակի պարսից գրական լեզվի զարգացումներում,
- 6) տվյալ ժանրի երկերը որպես հայ ժողովրդի պատմության և ազգագրության նորահայտ տեղեկատվական աղբյուր:

Հարդյուն՝ նշված հարցադրումների լուսաբանման հուշագրության, մասնավորապես ուղեգրության զարգացման, ժանրային առանձնահատկությունների, թեմատիկայի ու կառուցվածքի վերաբերյալ եզրակացությունները:

ԱՏԵՆԱԽՈՒԹՅԱՆ ԿԻՐԱՎԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ

Առաջ քաշած դրույթները պայմանավորում են տվյալ ուսումնասիրության արդյունքների կիրառական նշանակությունը, որը հնարավորություն է ստեղծում XIX դ. ուղեգրությունների ժանրային յուրահատկությունների հետազոտման գիտական ուսումնասիրության, հայ ժողովրդի պատմության որոշ հարցերի պարզաբանման, և այս նյութը XIX դարի պարսից գրականության ընդհանուր պատմական դատընթացներում օգտագործելու համար:

ԹԵՄԱՅԻ ՄՇԱԿԱԾՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒԹՅՈՒՆ

Գեղարվեստափաստագրական հուշագրության արձակը և այն ներկայացնող ժանրերն ուսումնասիրելիս մեթոդաբանական հիմք են ծառայում Մ.Բախտինի, Յու.Լուտմանի, Ջ.Կարմատետերի, Լ.Փինգբուրգի, Էդ.Ջորջաշյանի, Ս.Սարիյանի, Կ.Դանիելյանի և ուրիշների աշխատությունները: Պարսից ուղեգրություններին ու ճամփորդական օրագրերին իրենց աշխատություններում համառոտ անդրադարձել են մի քանի արևելագետներ՝ Բ.Բրագինսկին¹, Դ.Կոմիսարովը², Յ.Ռիպկան³, Յ.Բերտելսը⁴, Ջ.Նեդիստուրը⁵, Յ.Շինդլերը⁶, Է.Կորիանդերը⁷ և ուրիշներ:

Ինչ վերաբերում է իրանական գրականագիտությանը, այս պատճառով հուշագրային գրականությունը դեռևս չի դարձել հատուկ, համակարգված ուսումնասիրության առարկա: Հուշագրային երկերին իրանցի որոշ հայտնի գիտնականներ անդրադարձել են զուտ պատմագիտական, իմաստասիրական, կրոնագիտական, լեզվաբանական առումներով: Ա.Թամիմդարիի «История персидской литературы» («Պարսից գրականության պատմություն») գրքում, Զ.Զեյնալարզի «هزار سال نثر پارسی» («Պարսից արձակի հազար տարին») եռահատոր և Յ.Սիրաբեդինի «صد سال داستان نویسی ایران» («Իրանի վիպագրության

հարյուր տարին»)՝ քառահատոր աշխատություններում XI դ. պարսիկ դասական Նասիր-հուսրովի «Սաֆար-նամե» և Նասր-ադ-դին շահի (XIX դ.) ճամփորդական օրագիրը դիտարկվում են սոսկ որպես պարսից արձակի նմուշներ:

Իրանցի հասարակագետ Մ.Ռ.Ղանունիարվարի «In a Persian Mirror: Images of the West in Iranian Fiction» («Իրանի հայելու մեջ՝ Արևմուտքն իրանական գեղարվեստական գրականության մեջ») աշխատության մեջ նշվում է, որ XIX դարի սաֆար-նամեներում առաջին անգամ առավելային ուշադրությունը սևեռվում է արևմտյան երկրների տնտեսական, գիտական, կրթիակական և կառավարչական համակարգի վերաբերյալ տեղեկություններին⁸:

Ամերիկացի արևելագետներ Նիքքի Ռ. Մեդդիի և Ռուդի Մաթիի «Iran and Surrounding World: Interaction in Culture and Cultural Politics» («Իրանը և շրջակա աշխարհը. մշակութային փոխազդեցությունն ու մշակութային քաղաքականությունը») աշխատության մեջ բացահայտվում է սաֆար-նամեների նշանակությունը Իրանի զարգացման և վերափոխման վերաբերյալ գաղափարների առաջադրումներում⁹:

Պարսիկ քաղաքագետ Ա.Յաիրիի «Shiizm and Constitutionalism in Iran» («Շիիզմը և սահմանադրականությունը Իրանում») աշխատության մեջ հեղինակը սահմանադրական գաղափարներն Իրան ներթափանցելու մասին խոսելիս հիշատակում է Ս. Շիրազիի «Սաֆար-նամե» նշելով, որ հեղինակը նշված գաղափարներն Իրան է բերել աշխարհի անենանշանավոր սահմանադրական պետությունից¹⁰:

Պարսիկ գրականագետ Յ. Մորապվանդի «سفر و سیر و تاریخچه سیر و سفر در ایران» («Ճանապարհորդության ու շրջագայության համառոտ պատմությունը Իրանում») աշխատության մեջ «ما ایرانگردی و جهانگردی در آیین سفرنامه ها و اسناد» («Իրանում և աշխարհով մեկ կատարված ճանապարհորդությունները սաֆար-նամեների ու փաստաթղթերի հայելու մեջ») հոդվածում ժամանակագրական կարգով, սակայն¹¹, համառոտ անդրադարձ կա գրեթե բոլոր ուղեգրություններին¹²:

Վերջին տարիներս աճում է հետաքրքրությունը XIX դարի պարսից հուշագրային գրականության նկատմամբ, որի արդյունքն են այդ ժանրին նվիրված մի քանի հոդվածներ (Ս.Կ. Խուսրուդիվանահի «Курс на политическую модернизацию в каджарском Иране» («Քաղաքական մոդերնիզացման ուղին դաշարական Իրանում»), պարսիկ լեզվաբան Դ. Յադադ Ադելի «ناصرالدینشاه» «ناصرالدینشاه و آژ هگزین» («Նասր ադ-դին շահի եզրերի ընտրանի») և այլն):

Աշխատության **գիտական նորույթը** XIX դարի պարսից հուշագրային գրականության քիչ ուսումնասիրված ստեղծագործությունների համակարգված հետազոտումը և դրանց՝ որպես հայագիտության համար տեղեկատվական նորահայտ աղբյուր, համակողմանի ուսումնասիրությունն է, որտեղ զուգակցված են պատմագրական, աղբյուրագիտական և լեզվագիտական մոտեցումները:

¹ Брагинский И. Из истории персидской и таджикской литературы. М.: Наука, 1972.
² Комиссаров Д. Очерки современной персидской прозы. М.: Изд. Восточной литературы. 1960, История персидской литературы XIX—XX веков, рук. проекта Д.Комиссаров. М.: изд. фирма «Восточная литература» РАН, 1999.
³ История персидской и таджикской литературы. Под общей ред. Ян Рипка. М.: изд. «Прогресс», 1970.
⁴ Бертельс Е. Очерк истории персидской литературы. Л.: изд. Ленинградского Восточного института, 1928.
⁵ Redhouse J. The Diary of H. M. the Shah of Persia, during his tour through Europe in A. D. 1873. A verbatim translation. London, 1874.
⁶ Houtum Schindler, A. and Baron L. de Norman. A Diary kept by His Majesty the Shah of Persia during his journey to Europe in 1878. London, 1879.
⁷ Кориандер Э. Путешествие шаха Наср-эд-Дина по Мазандерану. Собственный Его Величества дневник. СПб., 1887.
⁸ Тамимдари А. История персидской литературы. Санкт-Петербург: «Петербургское востоковедение», 2007, с. 186.

⁹ St' u' .22. ص. 2004/1383، نشر چشمه ، تهران : داستان نویسی ایران ، تهرآن : نشر چشمه ، 2005/1384، ص. 198-224.
¹⁰ St' u' . هزار سال نثر پارسی. تهران: 1384، ص. 198-224.
¹¹ St' u' ' Ghanoonparvar M. In a Persian mirror: Images of the West in Iranian Fiction., Texas, 1993, p. 7-19.
¹² St' u' Nikki R. Keddie and Rudi Matthee. Iran and surrounding world: interaction in culture and cultural politics. Washington, 2002, p. 146-161.
¹³ St' u' ' Abdul- hadi Hairi. Shiizm and constitutionalism in Iran. Belgium, 1977, p. 11-25.
¹⁴ St' u' .1997/1376، مرکز تحقیقات و مطالعات ایرانگردی و جهانگردی، تهران.
¹⁵ St' u' ' Hosroupanah M. Курс на политическую модернизацию в каджарском иране. «Востоковедение и Африканистика», 2011, №1, с. 78-85.
¹⁶ St' u' .159-171. ص. 2011، ۳/۴، نامه فرهنگستان ، ناصرالدینشاه و آژ هگزین، عادل حداد غلامطی ،

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՍԱԿԱՆ-ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ՀԻՍՔԸ

Ատենախոսության հիմքում ընկած են պարսից հուշագրության ուսումնասիրության տիպաբանական, փաստագրական, պատմահամեմատական և վերլուծական-նկարագրական փոխյարացնող մոտեցումները: Տվյալ դեպքում, հուշագրությունները դիտարկվում են որպես որոշակի դարաշրջանի գրական և լեզվական իրողություն, կենցաղի ու սովորույթների ճանաչման հասարակական, սոցիալական ու նշանկության փոխհարաբերությունների ուսումնասիրման յուրօրինակ աղբյուր:

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՓՈՐՉԱՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսության թեման հաստատվել է ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի գիտական խորհրդում: Աշխատանքը քննարկվել և հրատարակելիս պաշտպանության է երաշխավորվել ԵՊՀ իրանագիտության ամբիոնի ընդլայնված նիստում: Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլվել են հեղինակի հրատարակած գիտական հոդվածներում, ինչպես նաև հանրապետական ու միջազգային գիտաժողովներում:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Աշխատանքը բաղկացած է ներածությունից, չորս գլուխներից՝ համապատասխան ենթագլուխներով, եզրակացություններից և օգտագործված գրականության ցանկից:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ներածության մեջ ներկայացված են հարցի պատմությունը, թեմայի արդիականությունն ու գիտական նորությունը, ուսումնասիրության նպատակն ու խնդիրները, աշխատանքի մեթոդաբանական հիմքը:

ՉՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԱՄՈՋՆԻՆ

XIX դարի երկրորդ կեսի սոցիալ-քաղաքական տեղադրությունը Իրանում Եվ Հյուսիսարևմտյան Գրկանդիստանի ջարդարանները

Առաջին գլխում նշված ժամանակաշրջանի պարսից գրականության սեղմ հիմնապատկերի համադրությամբ վերլուծվում է XIX դ. հուշագրային ժանրի երկերի առաջացման և զարգացման նախադրյալները:

XVIII դ. վերջը - XIX դ. սկիզբը ընդունված է Իրանի պատմության նոր ժամանակաշրջանի սահմանագիծ և եվրոպացիների ու իրանցիների մերձեցման, փոխադարձ ճանաչման և տնտեսական-քաղաքական կապերի աշխուժացման դարաշրջան անվանել: Եվրոպայում Արևելքի նկատմամբ հետաքրքրության աճը կապվում է ռոմանտիզմի ժամանակաշրջանի հետ: «Բայց ռոմանտիզմը ոչ մի բնագավառում թերևս այնքան խոր, այնքան համակողմանի և այնքան լայնատարած արտահայտություն չունեցավ, ինչպես գրականության մեջ... ռոմանտիզմը վերանայեց բոլոր նախորդ չափանիշները և նոր սահմանների վրա դրեց մարդկության գեղարվեստական զարգացումը»,- գրում է ակադեմիկոս Ս. Սարինյանը: Դա արտահայտվում էր ինչպես եվրոպացիների արևելագիտական ուսումնասիրությունների և արևելյան գրական հուշարձանների թարգմանությունների, այնպես էլ այս տարածաշրջանի հաճախացած ճանապարհորդությունների և Արևելքի մասին տեսական աշխատությունների (Ջ. Ռիչարդսոն, Ռ. Ջոնս) ի հայտ գալով:

Ինչ վերաբերում է գրականությանը, ապա «Անցյալ դարի (XIX դ. Ա.Մ.) վերջերից պարսից գրականությունը հանդես էր բերում նորացման միտումներ, որոնք պայմանավորված էին հասարակական նշանակալից տեղաշարժերով: Գրականության առջև ծառայած նոր խնդիրները, կյանքում նորն իմաստավորելու, նոր թեմաներ յուրացնելու պահանջը, ըստ էության, գոյության անհրաժեշտ պայման էր դարձել գրականության համար»,-գրում են հայ արևելագետները:

¹⁷ Սարինյան Ս. Հայկական ռոմանտիզմ, ՊԱ հրատ., Ե., 1966, էջ 11:
¹⁸ Տե՛ս՝ Մովսիսյան Հ., Շեխոյան Լ. Ժամանակակից պարսից գրականության պատմության ակնարկներ (1941-1978թթ.), Ե., ՊԱ հրատ., 1989, էջ 6:

իրոք, նշված ժամանակահատվածում երևան են գալիս գրական նոր երևույթներ, նոր հենց իրենց բովանդակությամբ: Հայտնի քաղաքական գործիչ, վարչապետ, գիտնական և բանաստեղծ Դայեմ-Մադամը համարձակվում է իր բանաստեղծություններում շինծու մեծարական բարեբանումների հետ մեկտեղ ասել ծանարությունը ռուս-պարսկական պատերազմներում դառն պարտությունների պատճառների մասին: Բանաստեղծ Յադմա Ջանդադին (մահ. 1859 թ.) ծաղրում է հասարակական կյանքի արատները, կառավարիչների ծրիակերությունն ու պնդեղեն «պահանջատիրությունը»: Անհատական պատական Շեյբանին (մահ. 1891 թ.) իր բանաստեղծություններում գանգատվում է պարսկական կյանքի «խառնակությունից»:

Պարսկական գրականության մեջ քննադատական մտքի սկզբնավորման խթան դարձավ հատկապես անգլիացի դիվանագետ ու գրող Ջեյմս Սորիերի (1780-1840 թթ.) արևելյան ու արևմտյան քաղաքակրթությունների համադրությամբ բովանդակային առումով միմյանց հետ կապված «Սպահանցի Հացի-Բաբայի արկածները» (1824 թ.) և «Սպահանցի Հացի-Բաբայի արկածները Անգլիայում» (1828 թ.) վեպերի թարգմանությունը: Այստեղ սուր ու անխնայ քննադատության էր ենթարկվում բոլոր մակարդակների կառավարիչների անօրենսությունները, դերվիշների ու մուլաների խաղախոսությունները, պետական պաշտոնյաների մակառակեղությունը: Կարևոր է նաև այն փաստը, որ այս վեպերն արժեքավոր նախորդինակ էին հետագայում սեփական գրականության մեջ դեռևս անճանոթ պատուհի ձևերն օգտագործելու համար:

Այսպիսով, որպես վերո նշված գործընթացների առդույնք պարսից գրականության նոր շրջանը նշանավորվեց նաև դեռևս բավականին փոքրաթիվ հուշագրային բնույթի ստեղծագործությունների ի հայտ գալով, ինչը այս ժանրի վերածնունդն սկիզբն էր: Սա իր հերթին նպաստավոր եղավ և հիմք դարձավ լուսավորական գրականության ստեղծման և գեղարվեստական արձակի տարբեր ժանրերի զարգացման համար:

Հարկ է նշել, որ նշված ժամանակի պատմական զարգացումներն առավելագույնս ազդել են հուշագրային ժանրերի ձևավորման ու հետագա զարգացման գործընթացի վրա: Այն իրողությունը, որ Պարսկաստանը XVIII դարի վերջին - XIX դարի սկզբին գտնվում էր շատ ծանր տնտեսական, քաղաքական, սոցիալական վիճակում, առաջացրել էր տարբեր ասպարեզներում սեփական որակյալ մասնագետներ ունենալու սուր պահանջարկ: Ռուսաստանի ու եվրոպական երկրների տնտեսական, քաղաքական, իրավական, մշակութային, լուսավորական ձեռքբերումներին հաղորդ ու գիտակ անձիք կրթելու համար արտասահման էին գործուղվում երիտասարդ իրանցիներ: Երանցից մի քանիսն իրենց հետ հայրենիք էին բերում արտասահմանում ճանապարհորդելու և ուսանելու տարիների վերաբերյալ ուղեգրություններ և օրագրեր: Մյուս կողմից, արևմուտքի երկրների գալթողական քաղաքականության պատճառով և արտասահմանյան երկրների հետ աշխուժացած դիվանագիտական հարաբերությունների բերումով հաճախացել էին պետական այրերի այցելություններն արտերկիր: Ո՛ր քանի որ բոլոր պետական ծառայողներն ի պաշտոնե պարտավոր էին գրավոր հաշվետվություն ներկայացնել տեսածի ու լսածի վերաբերյալ, ապա նրանց գրառումները հետագայում վերածվում էին ճանվորական օրագրերի կամ ակնարկների: Բացի այդ, ուղևորության էին մեկնում նաև դրա հնարավորությունն ունեցող անհատներ՝ իրենց հետ բերելով տեսածի, լսածի տպավորությունների օրագրեր, ակնարկներ, նոթեր ու հիշողություններ: Ինչպես գրում է Մոնիկա Ս. Ռիսգերը՝ «Ամբողջ XIX դարը Իրանի համար խոր փոփոխությունների ժամանակաշրջան էր: Այդ շրջանում սաֆար-ամենների թվի աճը պատահական չէր, քանզի դրան նպաստեց Իրանի և եվրոպայի միջև հարաբերությունների աշխուժացումը...»:

Պարսից գրականության նոր շրջանում հուշագրական ժանրի առաջին նմուշներն ի հայտ են եկել XVIII դարի վերջում - XIX դարի սկզբում: Ժամանակի առանձնահատկության բերումով ուղեգրություններն անխուսափելիորեն պիտի նորություններ մտցնեին գրավոր խոսքի թե՛ շարադրածներում, թե՛ լեզվական

¹⁹ Nikki R. Keddie and Rudi Matthee. Iran and surrounding world: interaction in culture and cultural politics. Washington, University of Washington press, 2002, 376 p., p. 147.

արտահայտչամիջոցներում:

XIX դարի սաֆար-նամեների հեղինակների հետաքրքրությունների և բերած տեղեկության ոլորտային և բովանդակային շրջանակները պայմանավորված էին արտասահմանյան ուղևորությունների գործնական նպատակներով: Հեղինակների մեծ մասն իրենց երկրներում, որպես կանոն, նշում են ճանապարհորդության որդապատճառները: Ի դեպ, հաճախ ստեղծված լինելով գործնական նպատակներով, ուղեգրությունը, ի վերջո (XIX դ. վերջ-XX դ. սկիզբ) դառնում բավականին զարգացած գրական ժանր՝ մեծ տարածում գտնելով ոչ միայն ուսումնասիրվող ժամանակի, այլև XX դ. պարսից գրականության մեջ:

XVIII դարի վերջին ստեղծված ուղեգրության հեղինակ Միրզա Աբու Թալեբ Մոհամմադ Եսֆահանին «Մասիր-ե Թալեբի յա սաֆար-նամե-ե Միրզա Աբու Թալեբ Խան» («Թալեբի ուղին կան Միրզա Աբու Թալեբ Խանի ճամփորդական օրագիրը») ստեղծագործության մեջ նշում է, որ ճանապարհորդության պատճառը Հնդկաստանի իշխանությունների հետ ունեցած խնդիրներն են: Ուղեգրությունը, իր խոսքերով, գրվել է բացառապես ուղևորության ընթացքում ստացված ծախսերը, տեղի ունեցած շատ կարևոր իրադարձությունները, պատահարներն ու զարմանալի փաստերն արձանագրելու նպատակով²⁰:

«Սաֆար-նամե-ե Ռեզա Դոլի Միրզա Նայեբ ալ-Էյալե» երկի հեղինակ՝ Ռեզա Դոլի Միրզա Նայեբ ալ-Էյալե, Ֆաթի ալի շահի բազմաթիվ թոռներից էր, ով 1856-1858 թթ. ճանապարհորդել է Եվրոպայում: Ուղևորության նպատակը եվրոպացիների ապրելակերպի ու կառավարման համակարգի, ինչպես նաև Անգլիայի հասարակական կյանքի որոշ մանրամասների ուսումնասիրությունն էր:

XIX դարում ստեղծված ճամփորդական օրագրերի ամենավաղ նմուշներից մեկը Միրզա Սալեհ Շիրազիի «Սաֆար-նամեն» է (սաֆար (պարս.) ճամփորդություն, ուղևորություն և նամե՝ գիրք, գրվածք): Շիրազին 1815-1819 թթ. թագաժառանգ արքայազն Աբբաս Միրզայի և հայտնի պետական գործիչ Լայեմ-Մադանի հանձնարարությամբ իրանցի մի խումբ ուսանողների հետ ուղևորվել է Եվրոպա որպես խմբի հոգաբարձու: Սալեհ Շիրազին ինքը ևս սովորել է անգլերեն, ֆրանսերեն, լատիներեն, ուսումնասիրել փիլիսոփայություն ու տպագրական գործ: Օրագրի ամենօրյա գրառումները մանրամասնում են նրա ճամփորդության ընթացքը, Անգլիայում ուսումնառության պայմաններն ու հանգամանքները:

Մյուս ուշագրավ ճամփորդական օրագիրը՝ «Ահվալաթ-ե սաֆար-ե Միրզա Մասուդ» («Միրզա Մասուդի ուղևորության նկարագրությունը») պատկանում է Մոսթաֆա Աֆշարի գրչին: 1829 թ. հունվարի 30-ին Պարսկաստանում Ռուսաստանի դեսպան Ա. Գրիբոլեդովի և նրա գլխավորած դիվանագիտական գրեթե ողջ աշխատակազմի սպանությունից հետո շահը հսոսրով-Միրզայի առաջնորդությամբ քաղության առաքելություն է ուղարկում Պետերբուրգ, որի կազմում էր նաև Մոսթաֆա Աֆշարը: Փաստորեն, նրա այս ուղեգրությունը դիվանագիտական որոշ նպատակով կատարված ճանապարհորդության արդյունք է, ինչը, անկասկած, իր հետքն է թողել այդ ստեղծագործության լեզվի, ոճի և բովանդակության վրա:

Նմանատիպ, «Սաֆար-նամե-ե Ֆարոխ Խան ամին Օդ-Դոուլե» («Ֆարոխ Խան ամին Օդ-Դոուլեի ուղեգրությունը») անվանումով օրագրի ստեղծման առիթ է եղել նախարար Ֆարոխ-Խանի գլխավորած դիվանագիտական առաքելությունը Եվրոպա՝ Իրանի դեմ Անգլիայի պատերազմի (1856թ.) դադարեցման նպատակով:

Ուշագրավ է, որ մի այլ պարսիկ ճանապարհորդ՝ Մոհամմադ Ալի բեն Մոհամմադ Ռեզա Միլադը, ով ավելի հայտնի է որպես Հայ Միլաի, թեև որպես ուղևորության պատճառ նշում է անցանկալի անուսումնասիրության խուսափելը, մինչդեռ իր արտասահմանյան շրջագայության բուն նպատակի մասին գրում է. «Գնացել եմ որոշ քաղաքներ տեսնելու, և երբ իմ երկիրը դառնամ, կասեմ՝ ես մի քանի եվրոպական քաղաք եմ տեսել, որոշ տեղեկություններ եմ հավաքել, և եթե երեխաները դպրոցում դրանց անվանումն ու տեսական գիտություն ունեն, ես սեփական աչքերով եմ տեսել և նրանց որոշ հարցերին ինչ-որ բաներ կարող

եմ պատասխանել»²¹:

XIX դարի ուղեգրությունների շարքում յուրահատուկ տեղ են զբաղեցնում թագավորական ընտանիքի անդամների ուղեգրություններն ու ճամփորդական օրագրերը:

Նասր-ադ-դին Ղաթարը (1848-1896 թթ.), ով Պարսկաստանի՝ Եվրոպա մեկնած առաջին մրապետն էր, 1873/1290 թ. եվրոպական մի քանի երկրներ էր այցելել՝ պայմանագրեր ու համաձայնագրեր կնքելու: Այնքերևաբար, շահը ուղղակի սիրում էր ճանապարհորդել. նա շրջագայել էր ոչ միայն եվրոպական երկրներում, այլև Պարսկաստանի մի քանի նահանգներում, որոնց մասին ևս պատմել է իր օրագրերում: Արտասահմանյան երկրներից ստացած նրա տպավորություններն ամփոփված են նրա երեք օրագրերում, որոնցից առաջին երկուսը պատկանում են իր, իսկ երրորդն՝ իրեն ուղեկցող մի քանի անձանց գրչին:

XIX դարի ճամփորդական օրագրերից ժամանակագրորեն ամենաուշ ստեղծվածը **Մոզաֆար-ադ-դին Ղաթարի** «Սաֆար-նամե-ե մոբարաթե-լե շահե-շահի» («Շահանշահի օրհնյալ ճամփորդական օրագիրը») երկն էր²²: Մոզաֆար-ադ-դին Ղաթարի գահակալության տարիները բնութագրվում են՝ մի կողմից, սոմտեսական անկման երևույթներով, մյուս կողմից՝ լուսավորչական բարեփոխումները անցկացնելու միտումներով: Իր բարենորոգչական նախագծեր ճիշտ իրագործելու նկատառումներով շահը մեկնում է պրոսասահման՝ իրեն հետաքրքրող արտերկրյա իրողություններին ծանոթանալու²³:

Ակնհայտ է, որ սաֆար-նամեի կամ սիահաթ-նամեի ժանրը (ուղեգրություն կամ ճամփորդական օրագիր), որն անդրադարձնում էր այն ամենը, ինչ տեսնում էր ճանապարհորդը, Իրանի համար կարևոր դեր խաղաց նաև XIX-XX դարերի եվրոպական գրականության ու մշակույթի նվաճումներին հաղորդակցման առումով: Արձակի զարգացման համար ոչ միայն կարևոր էր օրագրի նյութը, այլև ոճը՝ լեզվի պարզությունը, մտքի հստակությունը, դյուրընկալությունը: Ինքնին հասկանալի է, որ «...օրագիրը կազմողի խնդիրն այն էր, որ հնարավորինս շատ մաքուր հասկանալի այնպիսի բարեփոխումներ կատարելու անհրաժեշտությունը, որոնք կըշշափեին ավատատիրական կարգերից աստիճանաբար կասկածալիզմին անցնող իրանական պետության կյանքի բոլոր կողմերը: Հենց դրա համար էլ ստեղծագործության ոճը պետք է դյուրացներ հեղինակային խնդիրների ընկալումը և, դրանով իսկ, նպաստեր դրանց իրականացմանը»²⁴ - գրում է Դ. Կոմիսարովը:

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ ՀՈՒՇԱԳՐԱՅԻՆ ԺԱՆՐԵՐԻ ԱՎԱՆՈՒՅԹԸ ՊԱՐՍԻՑ ԴԱՍԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Երկրորդ գլխի առաջին ենթագլխում՝ «Հուշագրային ժանրի սկզբնավորումը դասական արձակում», խոսվում է նշված ժամանակաշրջանում հուշագրային ժանրի ի հայտ գալու և զարգացումների մասին: Նշվում է, որ հուշագրային ժանրն, ըստ ամենայնի, նորություն չէր պարսից գրականության համար: Այն դարավոր ընդունումից հետո Իրանում վերստին կազմավորվելով XIX դարում՝ զարգացում ստացավ հատկապես XX դարի առաջին կեսերին:

«Սաֆար-նամե»-ի ավանդույթն Իրանում սկզբնավորվել էր դեռևս XI դարում՝ նշանավոր բանաստեղծ և մտածող Նասիր-Խոսրովի (1004-1075 թթ.) համանուն հայտնի երկով, ինչպես նաև մեծն բանաստեղծ Խաղանի Շիրվանի (1120-1199 թթ.), Սիզարի Քուհիսթանի (1247-1320 թթ.) և այլ հեղինակների

²⁰ St' u' 2005/1383, تهران, 4 ص، ابو طالب بن مهدي اصفهاني، مسير طالبی یا سفر نامه ميرزا ابو طالب خان، تهران، 2005/1383

²¹ St' u' , 2000/1378, محمد علی بن محمد رضا میاح، سفرنامه حاج میاح به فرنگ، تهران، 2000/1378
²² مظفرالدین شاه، سفرنامه مبارکه شاهنشاهی، تهران، 1943/1321
²³ St' u' History of civilizations of Central Asia, Volume VI, Towards the contemporary period: from the mid-nineteenth to the end of the twentieth century, Coordinated by I.Skender-Mochiri: UNESCO Publishing, 2005, p. 472-474.
²⁴ История персидской литературы XIX-XX веков. М.: Изд. Восточная литература, РАН, 1999, с. 229.

այդ ժանրի ստեղծագործություններով: Սակայն կարելի է ասել, որ դասական գրականության մեջ այս ենթաժանրը կայացման սահմանային փուլից դուրս ձեռքբերումներ չունեցավ:

«Աջիռն դարերում Իրանը տարանցիկ կետ էր մշակութային ասպարեզում»²⁵, -նշում են արևելագետները: XI դ. երկրորդ կեսից պարսկական արձակուրդի հայտ են գալիս և աստիճանաբար խորանում են բարդացման միտումները: Այդ փոփոխությունները սոցիալ-քաղաքական գործոններից զատ պայմանավորված էին գրական իրողություններով. կրոնափիլիսոփայական մեկնաբանական երկերում կանոնիկ դարձած խրթնաբանության ու պերճախոսության ազդեցությունից զերծ չի կարողանում մնալ նաև գեղարվեստական արձակը: Այդ շրջանում վերջինս անցումային բնույթ և փոքր տեսակարար կշիռ ուներ: Առավելապես զրկում էին պատմական, փիլիսոփայական, կրոնական, բարոյախրատական ստեղծագործություններ:

Սաֆար-նամեն կառուցվածքով և բնույթով հուշագրային գրականության այն ժանրերից է, որի միավածքն իսկ (ճանապարհի ընթացքում տեսածը, զգացածը, տպավորությունները գրառելը) ենթադրում է ստեղծագործության ժամանակային և տարածական սահմանների ընդգրկվածություն, հեղինակային «ես»-ի ավելի անսրբո, համակողմանի ներկայություն:

Նասիր-խոսրովի մասին լեզունդները «գերմանացի արևելագետ Գ. Էթեն համեմատել է Ֆաուստի մասին վեպի հետ», -գրում է հայտնի արևելագետ Ե. Է. Բերտելսը:

Նասիր-խոսրովի գրական ժառանգության մեջ առանձնահատուկ ուշադրության է արժանի «Սաֆար-նամեն»՝ թե որպես վաղ շրջանի պարսկական արձակի նմուշ և թե որպես իրանական հուշագրային գրականության առաջին հուշարձան: Այն գրված է պարզ ու անբռնագրոսիկ, ընթերցողների լայն շրջանին հասանելի լեզվով: Հեղինակն աշխույժ անմիջականությամբ պատմում է այն ամենի մասին, ինչ տեսել է՝ ջանալով լինել հնարավորինս ծշմարտացի: Նշելով, որ ճանապարհորդությունների ընթացքում օրագիր է պահել, ուր գրառել է իր տպավորությունները, նա մանրակրկիտ և լիարժեք տեղեկություններ է հաղորդում յուրաքանչյուր վայրի ու իրադարձության մասին, որոնց մասնակիցն ու ակնամտեն է եղել: Նասիր-խոսրովի գրքում միջնադարյան Արևելքը ներկայանում է առանց գունագրորման: Այն ամենը, ինչ փոքր-ինչ տարբերվել է նրա իմացածից ու մինչ այդ տեսածից, անդրադարձ է գտել օրագրի էջերում:

Նասիր-խոսրովը «Սաֆար-նամեի» տպավորիչ, դյուրըմբռնելի դարձած պատումը դարձրեց շարունակ և մինչ օրս ընթերցողների ու մասնագետների ուշադրությունը գրավում է ամենայն բժախնդրությամբ հավաքված ու հաղորդված տեղեկատվության բազմազանությամբ և հարստությամբ: Հարկ է նշել, որ այդ երկը մի շատ կարևոր նորույթ էր բերում ժամանակի պարսկական արձակ խոսակցական լեզվի տարրեր ու արտահայտություններ, որոնք հատկապես հաճախադեպ են երկխոսություններում:

Արդի նշանավոր իրանագետ Սեիդ Սոհամադ Դաբիր Սիադին ընդգծում է այս հուշարձանի գրական-մշակութային կարևոր նշանակությունը՝ այն հիմնահող է դնում պարսից գրականության մեջ մեմուարային ժանրի վերընձուղման համար:

Ամփոփելով ասվածը՝ պետք է ընդգծել, որ Նասիր-խոսրովի «Սաֆար-նամեում» միախուլված են խոսքի տեղեկատվական ժանրակշիռ հենքն ու գեղարվեստական պատկերավորությունը, որոնք հուշագրային գրականության բոլոր ժանրերի հիմնասյուներն են:

Հուշագրական-ուղեգրական գրականության ավանդույթը Նասիր-խոսրովից հետո շարունակում են պարսից միջնադարյան գրականության նշանավոր երկու բանաստեղծներ՝ Խաղանի Շիրվանին ու Նիզարի Քուհիսթանին, որոնց երկերը, սակայն, ժամանակի գեղագիտական իրամայականով գրվել են չափածո:

Խաղանի Շիրվանին քասիդների նշանավոր վարպետ էր: Նա գրում է բարդ և

հարուստ լեզվով՝ օգտագործելով ժամանակի բանաստեղծական արտահայտչամիջոցների ամբողջ բազմազանությունը: Նրա մեծաթիվ ստեղծագործությունների շարքում առանձնանում է «Թոհֆաթ ալ-Էրադեյն» («Երկու Իրաքների ընծառն») երկը: Այստեղ ուղեգրական նյութից բացի տեղ են գտել նաև կանոնիկ խոհերը գրականության մասին: Հեղինակը գրավոր խոսքին վերագրում է դաստիարակական մեծ դեր՝ պնդելով, որ ամեն մի բանաստեղծ պետք է նաև ուսուցիչ-դաստիարակ լինի:

Սակայն տվյալ ընթացքում պոեմի հանգավորման կանոնով (մասնավիճակաբար, ...) գրված լինելով հանդերձ, այն հուշագրային ժանրին պատկանող ստեղծագործություն է: Պոեմ-ուղեգրության վերնագիրը բացատրվում է հեղինակի անցած երթուղով. Շիրվանից Մեքքա ճանապարհին անցնում էր պարսկական և արաբական Իրաքներով: Այն գրվել է 1156 թ.-ին, Խաղանիի Մեքքա հաջ կատարելու ընթացքում:

Ոճով պոեմն նկատելիորեն տարբերվում է Խաղանիի բարդ, այլաբանություններով ու ակնարկներով հագեցած մյուս ստեղծագործություններից: Ինչպես նշում է՝ խալոսնի արևելագետ Ա.Կոնսկին. «այն գրված է բավականին պարզ ձևով»²⁶: Աբու-ալ-Քասիմ Ջարրեն և «Իրանի գրականության ակնարկում» նշում է. «Այս պոեմը կառուցվածքով զգալիորեն ավելի պարզ ու հասկանալի է, ինչը, հավանաբար, անհրաժեշտ էր ընթերցողների ավելի լայն շերտերին դիմելու համար»²⁷:

«Թոհֆաթ ալ-Էրադեյնը» ուշագրավ է հատկապես իր հարուստ բովանդակությամբ: Խաղանին մանրամասն ներկայացնում է այցելած վայրերը, պատմում բանաստեղծների, պետական գործիչների հետ հանդիպումների, իր կենսագրության որոշ իրողությունների մասին, անդրադառնում հասարակական-փիլիսոփայական որոշ խնդիրների: Այստեղ խոսքի գեղարվեստական վարպետության առումով ուշագրավ են բնության պատկերավոր նկարագրությունները, որոնք, հավանաբար, նախապես գրվել են իրենթաց անմիջական տպավորությունների, սակայն ավարտում տեսք են ստացել ուղևորությունից հետո: Հենց այս փաստը հիմք է տալիս պոեմը դիտարկել ոչ միայն որպես ինքնակենսագրություն և ուղեգրություն, այլև հուշագրություն: Պոեմը վկայում է Խաղանի բանաստեղծի սուր դիտողականության և տարբեր բնագավառների վերաբերյալ նրա հարուստ գիտելիքների մասին:

Ստեղծագործությունն ուշագրավ է նաև նրանով, որ սկսվում է արձակ հատվածով, որն իր սեղմ արտահայտչականությամբ այդ շրջանի պարսկական գեղարվեստական արձակի հազվագյուտ նմուշ է:

Ճանաչված իրանագետ-գրականագետ Մ. Ջանդը ևս բարձր է արժևորում այս երկը. «Դա պարսկերենով գրված առաջին չափածո ուղեգրությունն է, և հավանաբար, մեզ հասած նմանօրինակ միակ գործը, թե, իհարկե, հաշվի չառնենք տաղանդով նրան զգալիորեն զիջող Նիզարի Քուհիսթանի Աղբեջան և Հյուսիսային Իրան կատարած ճամփորդության մասին «Սաֆար-նամե» պոեմը»²⁸:

Մասադ Սուհամմադ Նիզարի Քուհիսթանին (645/1247 թ. - 720/1320 թ.) ժառայում էր Քուհիսթանի իշխանավորների մոտ: Որպես պետական աստիճանավոր նա ժամանակ առ ժամանակ կատարել է ուղևորություններ և XIII դ. 80-ական թթ. շրջել է ողջ Քուհիսթանում: Նա առավել երկարատև, վառ տպավորություններ ստանալով ճանապարհորդել է Այսրկովկասում: Չնայած մոնղոլների պատճառած մեծ ավերածություններին, այս տարածաշրջանի երկրներում պահպանված բարձր մշակույթը չափազանց հետաքրքրել է բանաստեղծին: Այդ ճանապարհորդությունից ստացած տպավորություններն ու դիտարկումները նա աշխույժ անմիջականությամբ նկարագրել է իր չափածո «Սաֆար-նամեում»: Հեղինակը կրոնական թեմաներով գրույցները տեղի գիտնականների հետ, ինչպես նաև դիտարկումները ներկայացրել է կարճ պատմությունների ձևով:

Նիզարիի «Սաֆար-նամեն» պատմական, սոցիալական, ազգագրական

²⁵ Литература Востока в средние века. Часть 2. М.: Изд. МГУ, 1970, с. 8.

²⁶ Бертельс Е. Насир-и Хосров и исмаилизм. М.: Изд. Восточной литературы, 1959, с. 4.

²⁷ تهران، انتشارات سخن، سیاقی، دبیر محمد دکترا، توضیح و خسرو، تصحیح ناصر نامه سفر سفر، گزیده آورد راه 1992/1370، ص، 29.

²⁸ Крымский А. Низами и его современники. Баку: Элм, 1981, с. 411.

²⁹ Восток. Сборник второй: Литература Ирана X-XV в. М.-Л.: ACADEMIA, 1935, с. 60.

³⁰ Занд И. Шесть веков славы. М.: Наука, 1964, с. 134.

բնույթի կարևոր տեղեկություններ է պարունակում այն ժամանակաշրջանի այսպիսի կարևոր քաղաքային կյանքի մասին: Այդ տեղեկությունն հետազոտողներից մեկը՝ Նադյա Էբո Ջամալը գրում է. «Նիզարիի «Սաֆար-նամեն» բարդ ու արեղծվածային ստեղծագործություն է... իրականում բանաստեղծն ակնհայտորեն չի ցանկանում ընթերցողին տրամադրել ավելին, քան մակերեսային տեղեկատվություն այն հիմնական իրադարձությունների ու մարդկանց մասին, որոնց հետ ինքը հանդիպել է տարբեր վայրերում...»³¹:

Սիանգամայն այլ է իրանցի գրականագետ Չ. Բայրուրդիի գնահատականը: «Ճանապարհորդությունն Այսրկովկաս անհետ չանցավ Նիզարիի ստեղծագործության համար: Քաղաքները, ուր այցելեց նա, նորությունները, որ գրավեցին նրա ուշադրությունը, ընդդիշտ մնացին նրա հիշողության մեջ: Հետագայում հեղինակը հաճախ էր դիմում գեղարվեստական այն պատկերներին, որ այդ ճանապարհորդությունից մնացել էին հիշողության մեջ»³²:

Երկրորդ ենթագույնը՝ «Հայաստանը պարսից դասական շրջանի ուղեգրություններում» նվիրված է դասական շրջանի պարսից ուղեգրությունների Հայաստանին վերաբերող հատվածներին:

Պարսից միջնադարյան հուշագիրներից Նասիր-խոսրովը և Նիզարի Քուհիսթանին եղել են Հայաստանում և նկարագրել այն իրենց ուղեգրություններում: Անկասկած, հայ պատմաբանների ու պատմագրության համար արժեքավոր են այն պարսիկ ճանապարհորդների ուղեգրությունները, որոնց ուղին դեպի Արևմուտք անցնում էր պատմական Հայաստանի տարածքով: Հաճախ, նրանց երկերը տրամադրում են որևէ այլ աղբյուրում չվկայված տեղեկություններ, որոնք կամ նոր լույս են սփռում պատմական, ազգագրական հայտնի իրողությունների վրա, կամ հաղորդում ցարդ անհայտ փաստեր: Հուշագրությունների բովանդակության մասին խոսելիս Կոնրադը նշում է, որ «այդ ժամրի երկերում շատ են պատմագրության ու վիճակագրության տարրերը: Հուշագրողն անձ է, ով **օրյեկտիվ ու անկողմնակալ** (ընդգծումը իմն է- Ա.Մ.) վերարտադրում է փաստերը, մանրամասն նկարագրում այն ամենը, ինչ հանդիպում է ճանապարհին»:

Նասիր-խոսրովը «Սաֆար-նամենում» մանրամասն նկարագրում է այցելած բոլոր երկրները, այդ թվում՝ Հայաստանը: Հեղինակին առանձնապես հետաքրքրում են այն իրողությունները, որոնք ակնհայտ տարբերվում են իրեն հայտնի իրականությունից: Ի դեպ, Հայաստանի ու հայերի առնչությամբ թերևս տեղին է հիշատակել, որ տվյալ դեպքում գոյություն ունեի ինչպես այդգային, այնպես էլ կրոնական տարբերություն, մինչդեռ արևելյան այլ երկրներում բնակչության գերակշռող մեծամասնությունն նույնպես մուսուլման էր, իսկ հայերը՝ քրիստոնյա: Միայն թե ինչպես է Նասիր-խոսրովը նկարագրում հայկական քաղաքներն իր օրագրում.

«از تبریز روانه شدیم، به راه مرند و با لشکری از آن امیر و هسودان تا خوی بشیم و از آنجا با رسولی برقیتم تا برکری- و از خوی تا برکری سی فرسنگ است... آنجا رسیدیم. و از آنجا به وان و سلطان رسیدیم در بازار آنجا گوشت خوک، همچنانکه گوشت گوسفند، می فروختند و زنان و مردان ایشان بر دکانه نشسته شراب می خورند بی نحاشی. و از آنجا بشهر اخلاط رسیدیم هیزدم جمادی الاولی بود. و این شهر سر حد مسلمانان و ارمنیان است. و از برکری تا اینجا نوزده فرسنگ است... و در شهر اخلاط به سه زبان سخن گویند: تازی و پارسی و ارمنی- و ظن من آن بود که اخلاط بنین سبب نام آن شهر نهاده اند.

... از آنجا به شهر بطنین رسیدیم، به دره ای در نهاده بود. آنجا غسل خریدیم صد من به یک دینار بر آمده بود، به آن حساب که به ما بفروختند، و گفتند در این شهر کس باشد که او را در یک سال سیصد چهارصد خیک غسل حاصل شود...»

از آنجا به شهر آرزن شدیم. شهری آبادان و نیکو بود، با آب روان و بیستین و اشجار و بازار های نیک... دو بیست من انگور به یک دینار می فروختند، که آن را زر ارمانوش می گفتند... به شهر امید رسیدیم... و چهار دروازه بر این شهرستان است... هر یکی روی به جهتی از جهات عالم، شرقی را باب التجله گوند: غریب

³¹ Nadia Eboo Jamal, Surviving the Mongols: Nizari Qubhistani and the Continuity of Ismaili Tradition in Persia, London-New York, 2002, p. 109.

³² Байбурди Ч. Средневековый персидский поэт Низари в Закавказье. Պատմաբանասիրական հանդես, Ե., ՀԱՍՈ ԳԱ հրատարակչություն, 1959, h. 4, էջ 272:

³³ Художественно-документальная литература. Иваново, 1984, 175 с.

را باب الروم؛ شمالي را باب الأرمين؛ جنوبي را باب القل.³⁴

«(Ձավորիցից մեկնեցինք Մարանդի ճանապարհով և էնիդ Կաստուղանի գինվորականի հետ հասանք Խոյ: Այնտեղից ինչ-որ դեսպանի հետ հասանք Բերքի: Խոյից մինչև Բերքի երեսուն ֆարսանգ է: ... և այնտեղից հասանք Վան ու Ոստան: Այնտեղ՝ շուկայում, վաճառում էին ինչպես խոզի, այնպես էլ ոչխարի միս, և կանայք ու տղամարդիկ խանութների առջև նստած՝ գինի էին խմում անկաշկանդ: Այնտեղից ջուճաղ-ալ-ուլ անսվա տասնութին են ժամանեցի Ախլաթ քաղաք: Այս քաղաքը մուսուլմանների ու հայերի սահմանն է և այնտեղից մինչև Բերքի տասնինը ֆարսանգ է: Ախլաթ քաղաքում խոսում են երեք լեզվով՝ արաբերեն, պարսկերեն ու իսլամերեն: Կարծում են, որ այդ պատճառով էլ քաղաքն անվանում են Ախլաթ³⁵ Այնտեղից եկանք Բիթլիս: Այս քաղաքը դաշտավայրում է: Այնտեղից մեղր գնեցինք և պարզվեց, ըստ հաշվարկի, որ նրանք մեզ վաճառեցին հարյուր մենթը՝ մեկ դինարով³⁶: Ինձ մասացին, որ այս քաղաքում մի մարդ կա, որ տարեկան երեք հարյուրից ջուր հարյուր տիկ մեղր է ստանում:

Այնտեղից հասանք Արզն: Մի շեն ու գեղեցիկ քաղաք՝ հոսող ջրով, ծառերով, այգիներով և հիանալի շուկաներով: ... Այստեղ խաղողի երկու հարյուր մեղր մեկ դինարով են վաճառում: Այդ խաղողն անվանում են **Ռազ-ե Արմանուլ**...

Ճամանեցինք քաղաք Ամիդ... Այդ միջնաբերդը չորս դարպաս ունի... Ամեն դարպասն ուղղված է երկրի չորս կողմերը: Արևելյաններն անվանվում են Բաբ-ալ-հիլե (Տիգրիս գետի դարպասներ), արևմտյանները՝ Բաբ-ալ-ռուս (Հռոմեական դարպասներ), հյուսիսայինները՝ Բաբ-ալ-արմեն (Հայկական դարպասներ) և հարավայինները՝ Բաբ-ալ-դել (Բլրի դարպասներ):»

Այսպիսով, Հայաստանը տվյալ «Սաֆար-նամենում» ներկայացված է որպես հարուստ, բարեկարգ, գեղեցիկ երկիր, որի քաղաքներն ապահովված են հոսող ջրով, ինչն այն ժամանակ արևելքում հազվագյուտ երևույթ էր: Այս մի քանի պարբերություններից պարզ է դառնում, որ հայկական շրջաններում զարգացած էին հողագործությունը, այգեգործությունը, գինեգործությունը, մեղվաբուծությունը և գյուղատնտեսության մյուս ճյուղերը, արհեստներն ու առևտուրը: Ըստ հեղինակի, ընդհանուր առմամբ, տպավորությունն այնպիսին է, որ երկիրն անվտանգ ու ապահով է, հայերը աշխատասեր, հյուրասեր ու զործարար: Իսկ հայ վաճառականների համբավի, Ամիդ քաղաքի ու հայկական շրջանների միջև առևտրային և այլ սերտ հարաբերությունների մասին է վկայում այդ քաղաքի դարպասներից մեկի անվանումը՝ Բաբ-ալ-Արմեն՝ Հայկական դարպասներ:

Պարսից միջնադարյան հուշագիրներից Նիզարի Քուհիսթանին ևս ճանապարհորդել է Հայաստանում: Իր տպավորություններն ու դիտարկումները նա աշխույժ ու պարզ նկարագրել է «Սաֆար-նամենում»: Այստեղ ևս պատմական, սոցիալական, ազգագրական բնույթի կարևոր տեղեկություններ կան տվյալ ժամանակի այսրկովկասյան քաղաքների կյանքի մասին: 1281 թ. բանաստեղծն ուղեկցելով Աբաթա-խանին՝ անցնում է Թելե լճի ակիւմ (Թելե լիճն այլ կերպ անվանում էին Դարյաչե-յե կարուղան (Կապուտան լիճ), որը մեզ հայտնի Ուրմիան է):

Նիզարին անթաքույց հիացմունքով է նկարագրում Հայաստանի քաղաքների գեղեցկությունն ու հարստությունը: Սկզբից ևեթ հանդիպած քաղաքների ճարտարապետության մասին խոսելու նորադարձություն չունենալով հանդերձ, նա գովաբան է իր տեսած՝ հիաքսանջ գաղաքանդակներով հոյակապ պալատներն ու վեհաշուք տաճարները.

II Քաղաքները, որ Հայաստան երկրում են, Մշտապես վեհաշուք են ին այքին:

III Քանդակված են դրանք գրանիտե ժայռի քարծուներին,

شهرهایی کز بلاد ارمن است
معتبر پیوسته در چشم من است
بر قرار سنگ خارا ساخته

انتشارات سخن، تصحیح و توضیح: دکتر محمد دبیر سیاقی، تهران «راه آورد سفر» گزیده سفرنامه ناصر خسرو،

5-8 ص، 1991/1370

³⁵ Ախլաթ՝ արաբերեն «խառնուրդ, միացում»:

³⁶ Դինարը ոսկե դրամ է՝ 4,25 գր. մաքուր քաշով:

Իսկ քաղաքի առջև խոր խանդակ է:
 IV Կտուրը, պատերը, սյուները
 Բոլորը տաշված քարից:
 V Բարձրաբերձ ամրոցը գրանիտից է շինված,
 Պատերին գեղանկար աշխատանք է:
 VI Այնտեղ կառուցված են այնպիսի
 տաճարներ,

ژرف رودی پیش شهر انداخته
 سقف و دیوار و ستون هر مقام
 کرده از سنگ تراشیده تمام
 حصنی از خارا بر آورده رفیع
 کرده بر بارو عملهای بدیع
 ساخته بتخانه ها در وی چنان

Որ զարմանքից բերանը բաց մնաց՝:
 Հայաստանում Նիզարին վկա է լինում մոնղոլների դեմ տեղի բնակչության
 ապստամբությանը: Ապստամբները թաքնվում են «Ամիր» բերդում (խոսքը Ամիր
 քաղաքի մասին է): 1236 թ. բազմաբանակ մոնղոլական զորքին հաջողվում է
 կտրել քաղաքի պաշտպանների դիմադրությունը: Ինչպես հայտնի է, քաղաքն
 ավերվում է, սակայն քաղաքում մնացած բնակչությունը մեկ անգամ էլ, որ
 պայքարում է ազատության համար, որի մասին են վկայում «Սաֆար-Մամեթի»
 տողերը.

کز تحیر در دهان ماند بنان

I Ամիր ամրոցը հանկարծ, մի այլ կողմից
 ճակատագրի քնահաճույքով, թիրախ դարձավ
 բախտի նետերի:
 II Ամրոցի ժողովուրդն ընթուստացավ որոշ ժամանակ

قلعه انیق از این دیگر طرف
 تیر تقدیر فلک را شد هدف

Եվ դեմ դուրս եկավ շահին անսպասելի:
 III Անճարությունից ականջները բամբակ խցկեցին,

یکزمان قومی در و عاصی
 شدند
 از قضا با پادشاه باغی شدند
 از تغافل پنبه شان در گوش
 بود

[2է որ] այդ դժբախտ մարդկանց արյունը եռում էր:
 Այդ ապստամբությունը, ինչպես գրում է Նիզարին, ժողովրդին հույս էր
 ներշնչում և մոնղոլների հանդեպ սարսափը ցրում: Նկատի առնելով
 ապստամբների պայքարի ծանր պայմանները Նիզարին կանխագուժում էր
 նրանց սպառնացող կործանումը և ակնհայտորեն կարեկցում նրանց: Տեղի
 բնակչության հանդեպ Նիզարիի կարեկցանքը հատկապես խոսում է
 դրսևորվում հայկական միջնադարյան Գոթջա՝ քաղաքից մի կնոջ մասին
 հետևյալ պատմության մեջ.

خون ان بیچارگان در جوش بود

I Գոթջայում հանդիպեցի սզակիր մի կնոջ,
 Եւ վշտալի լալիս էր շուկայի մոտ:
 II Կինը երեսը քսում էր հողին հուզված,
 Աստու՛ն առջև խոնարի խոսում էր իր
 զաղտնիքից...

عورتی در کوچه دیدم سو کوار
 اشک ریزان بر سر بازار راز
 روی میماید خوشش بر خاک کرم
 با خدا می گفت رازی نرم نرم

IV «Օ՛, արարիչ,-ասում էր նա,-քո ստրուկն եմ ես,
 Ոնց ուզում ես, այնպես էլ վարվիր ինձ հետ,
 V Բայց եթե դու ինձ գերի ես հանձնել նման մի
 կյանքի,

با خدا می گفت ای پرورد کار
 بنده ام هر چون که میخواهی بنادر
 لیک چون کردی بدین روزم اسیر

Ու ես անհնազանդ եմ, մի՛ պատժիր դու ինձ:
 VI Ուժ չունեն ես ծառայելու անհավատներին,
 թերևս միայն
 Թո կանքին կարող եմ ես հնազանդվել»:
 VII Այդ կնոջ արիությունը գնցեց ինձ,
 Ցասան ևրակն ալեկրծեց հոգիս:

کر نه کردم طاعتی پر من مکیر
 خدمت کافر نمی دانم گذاشت

Նկատենք, որ Նիզարին իր ստեղծագործության մեջ միջնադարյան
